

Ա. Դ. Ա. Խ Ն Ի

ԺԶ

Երկրորդ օրն առանց թշնամութեան անցաւ . Օրայ տունէն չերաւ , և Պարլիչի նիներուն գուռն ինչուան իրիկուն գոյ մնաց : Պահպանութեան համար ձգուածքանի մը զինուորները հրապարակին և գեղին շրջակայից մէջ վեր վար կը պտըտէին . խակ գեղապետի փոխանորդն ար իր պաշտօնին նշանագրեստը վրայէն չէր հաներ :

Ընթրիքի միջոց Աղաւնի ուրախութեամբ ցրցուց Օրսոյի նէվիլ օրիորդէն ընդունած հետեւեալ նամակը .

Ազնիւ Աղաւնի , մեծաւ գոհութեամբ իմացայ եղբօրդ նամակէն որ ձեր թշնամութիւնները լընցեր են . ընդունէ իմ ուրախակցութիւնս : Հայրս ալ Այաջիոյ չկրնար կենալ քանի որ եղբայրդ քովը չէ որ պատերազմերու վրայ խօսի և հետը որայ : Այսօր ճամբայ պիտի ելլենք , և գիշերն աղքականիդ քով պիտի անցընենք , որուն նամակ մը տուիր մեզի : Խսկ միւս որ ժամը տամնըմէկին ատենները պիտոր գամ քեզի՝ պրուժիոյի համն առնելու , որ կ'ըսես թէ լեռը շնուածը քաղաքը շնուածէն շատ ազնիւ է :

Ո՞վ լեր , ազնիւ Աղաւնի .

Բարեկամյ
Լի Է. Դ. Ա. Ն է. Վ ի Լ

— Ըսել է որ իմ երկրորդ նամակս չէ ընդունած , զուրցեց Օրսոյ :

— իր նամակին թուականէն կը տեսնես որ Լիւդիա ճամբան եղած պիտոր ըլլայ՝ քու նամակդ Այաջիոյ հասած միջոցը : Մէջը զրած էիր որ չգայ հոս :

— իմացուցի իրեն որ պաշարման վիճակի մէջ ենք : Կարծեմ մարդ ընդունելու ատեն չէ :

— Բէհ . Անզղիացիք նորօրինակ մարդիկ են . ան իրիկունն որ Լիւդիոյ սենեակը պառկեցայ , ըսաւ ինծի որ կը ցաւէր թէ որ մեծ վրէժինդրութիւն մը շտեսած Գորսիդայէն երթար : Թէ որ կ'ուզես , Օրսոյ , կրնայինք իրենց ներ-

կայութեան առջև մեր թշնամեաց տան վրայ յարձակմունք մը տալ :

— Գիտե՞ս , ըսաւ Օրսոյ , որ դու սխալ մամբ կնիկ ծներ ես . աղէկ զինուորական մը կ'ըլլայիր :

— Կրնայ ըլլալ : Հիմա երթամպրուշ յիւն շինեմ :

— Աւելորդ է : Մարդ մը խրկելու է որ երթայ իմաց տայ իրենց ու խափանէ զալուստնին՝ քանի որ ճամբայ չեն ելած :

— Աս փոթորիկով մարդ կ'ուզես խըրկել , որ հեղեղը առնէ տանի զինքը : Ի՞նչպէս կը ցավիմ խեղճ աւազակներուն վրայ . աղէկ որ հաստ վերարկուներ ունին : Գիտե՞ս ինչ կրնաս ընել , Օրսոյ . թէ որ փոթորիկը դադրի , վաղը առաւօտ մութն ՚ի լցոս ճամբայ ելիր , որ կարենաս մեր բարեկամին քով հասնիլ քանի որ անոնք իրմէն չեն բաժնուած : Ազահովապէս կրնաս հասնիլ , որովհետեւ Լիւդիա միշտ ուշ կ'ելլէ անկողնէն : Կը պատմես հոս հանդիպած բանները , և թէ որ դիտաւորութիւննին դալ է , սիրով կ'ընդունինք զիրենք :

Օրսոյ հաւանեցաւ աս բանիս . և Աղաւնի քանի մը վայրկեան լուսթենէ ետքը ըսաւ .

— Թերեւս կարծես որ կատակի համար ըսի որ կրնայինք Պարրիչիներուն տան վրայ յարձըկիլ . բայց չես գիտեր որ մենք զօրաւոր ենք , մէկի դէմ երկուք ենք . որովհետեւ քանի որ քաղաքապեսը պաշտօնէն կախեց զգեղապետը , բոլոր գեղացիք մեր կողմն են . կը ընանիք զանոնք կտոր կտոր ընել . և դիւրին է առիթ մը գտնալ : Թէ որ ուզես կրնամ ես աղբիւրին քով երթալ և իրենց կնիկները ծաղը ընել . Պարրիչինեները դուրս կ'ելլեն . . . կամ թերեւս , որովհետեւ վաս մարդիկ են , իրենց պատուհաններէն վրաս հրացան կը պարպեն , և անտարակոյս սխալ նշան կ'առնեն : Ա՛լ ան ատեն ուրիշ բան պէտք չէ . իրենք են առաջին կոուողը : Վնասը՝ պարզ յաղթուողներունն է . որովհետեւ շփոթութեան մը մէջ ովլ կրնայ ըսել թէ սա անձը հրացան պարպեց :

Հաւտա՛, Օրսոյ, խօսքիս . սեւազգեստ դատաւորները կու դան՝ ճերմակ թըղթերը սեռվ կ'աղտոտեն, խել մը փուռ խօսքեր կ'ըսեն, և ծայրը բան չելլեր : Եներունի աղուէսը կերպը կը գտնար ցորեկ ատեն աստղեր ցուցընելու անոնց : Ո՞հ, թէ որ քաղաքապետը Վինչէնդէլլոյի առջեր չըլլար, հիմա անոնցմէ մէկ հատ մը պակաս եղած կ'ըլլար :

Աս խօսքերն անանկ պաղ արեամբ կ'ըսէր Աղաւնի՝ ինչպէս որ վայրկեան մը առաջ պրոշչիոյի վրայ խօսեր էր : Օրսոյ ափշած՝ վախով մը կը նայէր քըռջը վրայ . եպքը ուրքի վրայ ելլելով,

— Աղաւնի, ըսաւ, վախեմ թէ դու սատանայ մըն ես կնոջ կերպարանք առած . բայց հոդ մի ըներ . թէ որ ես չկարենամ կախել տալ Պարրիչինիները, ուրիշ կերպով մը կը հոդամ զիրենք :

— Որչափ շուտ ըլլայ՝ այնչափ աղէկէ, պատասխանեց Աղաւնի հառաջելով : Ո՞ր ձին կը հեծնաս վաղը, Օրս' Անտոն :

— Սեր : Ինչու կը հարցընես :

— Որպէս զի զարի կերցընեմ :

Օրսոյ իր սենեակը քաշուեցաւ . Աղաւնի պառկելու խրկեց զՍավերիս ու հովիւները, և մինակ մնաց խոհանոցին մէջ, ուր կը պատրաստէր պրոշչիոն : Մերթ ընդ մերթ ականջ կը դնէր և կը սպասէր անհամբերութեամբ որ եղբայրը պառկի : Երբոր յուսաց որ քուն եղած կ'ըլլայ, դանակ մը առաւ ձեռքը, փորձեց նայեցաւ սուր ըլլալը, և զգուշութեամբ մը պարտէզն ելաւ, ուր ցան կապատ, տեղւոյ մը մէջ դրած էին ձիերը . որովհետեւ Գորսիգայի ձիերը ախոռը չեն դրուիր, սովորաբար դաշտի մէջ կը թողուն ձիերը, ուր պէտք է իրենց սնունդը գտնան և ցրտէն ու անձրեէն պաշտպանուին : Աղաւնի նոյնալիսի ըզգուշութեամբ ցանկապատ տեղը մը տաւ, և մեղմ ձայնով մը սուլածին պէս՝ ձիերը քովը ժողվուեցան, որոնց ստէպ հաց ու աղ կը տանէր : Երբոր սև ձին քովը մօտեցաւ, ուժով մը բաշէն ըըռնեց և ականջը դանակովը ճգքեց : Կենդանին սաստիկ մը ցասքեց ու փախաւ՝ սուր ձայնով մը պոռալով : Աղաւնի սիր-

տը գոհ երբոր պարտէզը կը դառնար, Օրսոյ բացաւ պատուհանն ու Ո՞վ է ան՝ պոռաց : Աղաւնի լսեց որ Օրսոյ կը լեցընէր հրացանը . բարեբազզաբար պարտիզին դուռը մութէն ծածկուած էր : Քիչ ատենէն եղբօրը սենեակը լոյս տեսաւ . մէկէն ցանկին դուռը գոցեց, և պատերուն քովէն քալելով, որպէս զի զգեստը ծառերուն մութ տերեններուն հետ խառնուելով՝ չաեսնուի, Օրսոյէն առաջ կրցաւ խոհանոցը հասնիլ :

— Ի՞նչ կայ, հարցուց Աղաւնի :

— Ինծի երեցաւ, պատասխանեց Օրսոյ, որ պարտիզին դուռը կը բանան :

— Անկարելի բան է . շունը հաջած կ'ըլլար : Բայց թէ որ կ'ուզես նէ, երթանք տեսնենք :

Օրսոյ շրջան մը ըրաւ պարտիզին մէջ, և տեսնելով որ արտաքին դուռն աղէկ գոցուած է, քիչ մը ամծթով մնաց ու սկսաւ դէպ 'ի սենեակն երթալ :

— Ուրախ եմ, ըսաւ Աղաւնի, որ կը խոհեմնաս, ինչպէս որ վիճակդ կը պահանջէ :

— Դու զիս կը կատարելագործես, պատասխանեց Օրսոյ : Գիշեր բարի :

Առաւօտն արշալուսոյն Օրսոյ ոտքի վրայ էր՝ պատրաստ ճամբայ ելելու . և աճապարելով սուրճ խմելու միջոցը՝ հովիւ մը գնաց թամբելու սև ձին : Այդ մարդը չկրցաւ սանձ դնել կենդանուոյն բերնին, որովհետեւ գիշերուան վէրքին ցաւը կրելով ու միւս ականջին համար վախնալով՝ ձին վեր կը ցատքէր, կիցեր կը զարնէր, կը խիրնջար, միով բանիւ՝ ըրածը չէր մնար :

— Քեզ տեսնամ շուտ ըրէ, աղաղակեց Օրսոյ :

— Ա՞հ, Օրս' Անտոն, ահ, Օրս' Անտոն, պոռաց հովիւը :

— Ի՞նչ կայ, հարցուց Աղաւնի :

Ամենքը ձիուն քով մօտեցան, և անոր ճղքած ականջը տեսնելով՝ բարկութիւննէն միաբերան պոռացին : Գիտնալու է որ Գորսիգացւոց մէջ թշնամոյն ձինվիրաւորելը՝ վրէժինդրութիւն և մահուան սպառնալիք է . և կ'ըսեն թէ հրացանի հարուած մը միայն կըր-

նայ այդ յանցանկքը սրբել: Թէպէտ Օրսոյ ուրիշներէ աւելի նուազ կը զգար այդ նախատինքը՝ երկար ատեն ցամաք երկիր ապրած ըլլալով, սակայն թէ որ այդ վայրիկենին Պարրիչինիներուն կողմէն մէկը դիմացն ելած ըլլար, հաւանական էր որ մէկէն վրէժը առնէր: — Վաստ անզգամներ, ըստ Օրսոյ. խեղճ կենդանիէն վրէժնին կ'առնեն, և չեն համարձակիր դիմացս ելլելու:

— Ի՞նչ բանի կը սպասենք, պոռաց Աղաւնի սաստկութեամբ. կու գան ատոնք գրգուելու զմեղ, ձիերնիս վիրաւորելու, և մենք անշարժ պիտի կենանք: Մարդիկ էք դուք:

— Վրէժինդրութիւն, պատասխանեցին հովիւները: Ձին գեղին մէջ պըտրտցընենք, և տուներնուն վրայ յարձակինք:

— Իրենց աշտարակին մօտ յարդնոց մը կայ, ըստ Բօլոյ կրիֆֆոյ. մէկէն բուընկցընել կու տամ ես անիկայ: — Ուրիշ մը կ'ուզէր երթալ եկեղեցւոյն զանգակատան սանդուխը բերել. երրորդ մըն ալ կ'ըսէր, գերանով մը՝ որ հրապարակին վրայ կը գտնուեր, Պարրիչինիներուն դուռը կոտրել: Ան միջոցին Աղաւնի ըստ իր արբանեկաց որ գործի ձեռք զարնելէ առաջ ամենուն մէյմէկ մեծ դաւաթով անխոնախառն ըմպելիք պիտի տար:

Սակայն ինչ տպաւորութիւն որ յուսացած էր Աղաւնի որ այդ դէպքն ընէր Օրսոյի վրայ, չտեսնուեցաւ վրան. որովհետեւ վատ և ցած վրէժինդրութիւն մը սեպելով՝ սկսաւ արհամարհէլ իր թշշնամիքը, և կ'ըսէր մոքէն թէ այդպիսի անձինք արժանի չեն իրեն հետ կոռուելու: Երբոր հովիւներուն ձայնը քիչ մը ցածցաւ, իմացուց Օրսոյ անոնց որ իրենց գիտաւորութիւննին մէկղի ձգեն, և թէ արդարութիւնն իր ձիուն ականչին վրէժը պիտի առնէր: — Ես եմ հոստէրը, խստութեամբ մը վրայ բերաւ, և կ'ուզեմ որ հնաղանդիք ինձի: Ով որ գեռ խօսք կը բանայ սպաննելու կամ այրելու, ես կը սպաննեմ զանիկայ: Թամ բեցէք մոխրագոյն ձին:

— Ի՞նչ, ըստ Աղաւնի Օրսոյի՝ մէկղի քաշելով զինքը, այդպէս թող կու տաս որ նախատեն զմեղ: Հօրերնուս կենդանութեան ատեն՝ Պարրիչինիները ըրնաւ չէին կը հարձակի մեր կենդանիները վիրաւորելու:

— Ես քեզի խօսք կու տամ որ պիտի զղան. բայց զինուորաց և բանտապանաց կ'իյնայ պատժել անանկ վատ մարդիկն որ կենդաննեաց վրայ միայն երթալու կը համարձակին: Ըսի արդէն քեզի, արդարութիւնը պիտի վրէժու առնէ անոնցմէ... ապա թէ ոչ... կը ցուցընեմ քեզի թէ որու որդին եմ:

— Համբերութիւն, զուրցեց Աղաւնի հառաջանգը:

— Աղէկ զիտնաս, քոյր իմ, շարունակեց Օրսոյ, որ եթէ ՚ի դարձիս իմանամ որ Պարրիչինիներուն դէմ բան մը ըլլուեր է, ոչ երբէք կը ներեմ քեզի: — Ետքը աւելի անոյշ ձայնով մը ըստ. Շատ հաւանական է որ հաղարապետն ու աղջիկը հետս կը բերեմ հոս. նայէ որ իրենց սենեակները կարգի դրուին, նախաճաշն աղէկ ըլլայ, միով բանիւ՝ հիւրերնիս շատ գէշ բնակարան մը չգտնեն տուներնիս: Ե՞կ համբոյր մը տուր. քեզ տեսնամ հանդարտ կենաս. ահա մոխրագոյն ձին պատրաստ է:

— Օրսոյ, ըստ Աղաւնի, թող չեմ տար որ մինակ երթաս:

— Մարդու պէտք չունիմ, պատասխանեց Օրսոյ, և ապահով եղիր որ թող չեմ տար որ ականջ կտրեն:

— Ո՞հ, անկարելի է որ պատերազմի միջոց թողում որ առանձին երթաս: Է՛ Բոլոյ կրիֆֆոյ, ձիան ֆրանսէ, Մէմինյ, հրացաննիդ առէք. եղբօրս ընկերութիւն պիտի ընէք:

Քիչ մը ատեն հակառակելէ ետքը, Օրսոյ զինքաւ Աղաւնիի, և հովիւներէն զանոնք ընտրեց՝ որոնք ամենէն աւելի պուացեր էին Պարրիչինիներուն վրայ յարձրկելու. Ետքը տուած պատուէրները նորէն կը կնելով քրոջն ու մնացող հովիւներուն, ճամբայ ելաւ, և խոտոր ընթացք մը բռնեց՝ Պարրիչինիներուն տանն առջևէն չանցնելու համար:

Բիեղրանէրայէն ելան և արագու-
թեամբ ձիերնին կը վազցընէին . երբոր
գետակ մը հասան, ծերունի բոլց կրիֆ-
ֆոն շատ մը խողեր տեսաւ, որոնք տըլ-
մին մէջ թաւալեր էին և կը վայլէին
արեն ու ջրին զովութիւնը : Մէկէն նը-
շան առաւ ամենէն դէր խողին, և հրա-
ցանը պարպածին պէս՝ սպաննեց զա-
նիկայ : Կենդանւոյն ընկերքն անմիջա-
պէս կայծակի պէս երազութեամբ փա-
խան, և թէպէտ միւս հովին ալ հրա-
ցան պարպեց վրանին, բայց անոնք ան-
վսաս ազատեցան անտառի մը մէջ :

— Ուրբմելի մարդիկ, զուրցեց Օր-
ոյ . խողերը վարազ կը կարծէք :

— Զէ, Օրս' Անտոն, պատասխանեց
Բօլց կրիֆֆոյ, անանկ չէ, հապա այդ
խողերը փաստաբանինն են, ձիուն ա-
կընջին փոխարէնն ըրինք :

— Չեզի պէս անզգամներ, աղաղա-
կեց Օրայ բարկութենէն կրակ կըու-
րած, դուք ալ մեր թշնամեաց ըրած
ցածութեանը կը նմանիք : Գացէք քո-
վէս . ձեզի պէտք չոնիմ . դուք խողե-
րուն հետ կուտելու կտրիճ էք : Կ'եր-
դուլննամ որ եթէ յանդրգնիք հետա-
դալու, դուխնիդ կը ջախջախեմ :

Երկու հովիւները պազ մնացին ու
իրարու կը նայէին : Օրայ ոտքին մըտ-
րակներովը ձիուն փորին ղարկաւ, և
աներեսոյթ եղաւ :

— Տեսայր հիմա, ըստա թօլոյ կրիֆֆոյ՝
ընկերովը . եկուը սիրէ աս մարդիկներն
որ այս կերպով կը վարուին հետդ : Ա-
տոր հայրը, հազարապետը, սրդողեցաւ
քեզի՝ անգամ մը փաստաբանին վրայ
հրացան շտկելուդ համար . . . անխելք
եղար որ չպարպեցիր : . . . իսկ որդին . . .
տեսար ինչ ըրի իրեն համար . . . կը
սպառնայ զլուխս ջախջախել, ինչպէս որ
կը ջախջախեն զդումէ անօթ մը որ ալ
մէջը զինի չկրնար պահել : Ահա ասանկ
բաներ կը սորվին ցամաք երկիր, Մէմ-
մոյ :

— Անանկ է . և թէ որ իմացուի որ
զու սպաններ ես այդ խողը, դատաս-
տան կը բանան վրադ, և Օրս' Անտոն
չուզենար պաշտպաննել գքեզ դատա-
ւորաց առջին, և փաստաբանին ստակ
տալ : Բարեբազգաբար մարդ չտեսաւ
զքեզ, և սրբուհի Նեկա վտանգէն խա-
լսեց զքեզ :

Քիչ մը ատեն մտածելէն ետքը, եր-
կու հովիւներն որոշեցին որ ամենէն ա-
ւելի խոհեմ ճամբան խողը փոսի մը
մէջ նետելն էր . ինչպէս որ ըրին . բայց
իւրաքանչիւրը մէյմէկ մեծ կտոր մէկդի
դնելով խեղճ խողին մնէն, որ տէլլա
Ռէպիկաններուն և Պարրիչիներուն ա-
տելութեանը զոհ եղեր էր :

Կը շարունակուի :

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Ո Յ Մ Ե Ծ Ա Յ

Բ Ա Ս Ե Ն

Յերկուս բաժանի գաւառդ 'ի վերին և 'ի Ստորին . սա յարելից վերնոյն .
ընական դրիւքն զանազանին յիրերաց, այնու զի վերինն ծայր 'ի ծայր համօրէն
տարածութեամբն տափարակ է այնպիսի յորում չերևի և ոչ բլուր մի դուզնա-
քեայ՝ որ արգել հայելոյ լինիցի կողմանէ 'ի կողմն, բաց յոստոյ մի լերինն ծիրա-
նեաց՝ որ 'ի հիւսիսոյ երկայնեալ ձգի 'ի դաշտ անդը լայնածաւալ : իսկ Ստորինն